# Կոտայքի մարզպետը Աբովյանի պետական քոլեջում ներկա էր ավարտական դիպլոմային աշխատանքների ներկայացմանը

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այսօր Աբովյանի պետական քոլեջում ներկա էր դիզայնի և գեղանկարչության բաժինների ավարտական դիպլոմային աշխատանքների ներկայացմանը:

Ներկայացված էին 15 աշխատանքներ:

Մարզպետը շնորհավորեց շրջանավարտներին ու մեծ հետաքրքրվածությամբ ունկնդրեց քոլեջի սաներին, որոնք կիսվեցին իրենց կտավների ստեղծման պատմություններով:

Դիպլոմների հանձնման արարողությունից հետո մարզպետը շրջեց ցուցասրահով և ծանոթացավ ներկայացված մյուս աշխատանքներին: